տէին խաչեալ Յիսուսը (Յովհ. ԺԹ. 25–27)։ Յարուցեալ Փրկիչը երևցաւ նաև Իւղաբեր կանանց ու ըսաւ «ողջ էք. և նոքա մատուցեալ կալան զոտս նորա և երկիրպագին նմա» (Մատթ. ԻԸ. 9–10)։ Աւետարանի պատմութեան մէջ Իւղաբեր կանայք այսչափով միայն կը յիշատակուին, բայց ինչպէս յիշուեցաւ վերև, անոնք կատարեալ անձնուիրութեամբ կը վերաբերուէին հանդէպ Յիսուսի թէ՛ անոր քարոզութեան ժամանակ, ի կենդանութեան, և թէ թաղումին՝ երբ անոյշ իւղերու օծումով և խունկով պատեցին Անոր անապական մարմինը։ Իւղաբեր կանանց այս սրբատառուչ գործին զմայլած՝ մեր չարականի բանաստեղծները եւ գանձասացները՝ ինչպէս Նարեկացին, Շնորհալին, Սկեւռացին և Երզնկացին՝ կ'անուանեն զանոնք նաև խնկաբեր և խնկազգեաց։ Իսկ Մարիամանիվ բառը քանիցս գործածուած է Շարականին Ղազարու Յարութեան Կանոնին, ինչպէս Տօնամակին մէջ և այլ տեղեր։ Հայ Եկեղեցին երկիցս կը տօնախմբէր Իւղաբեր կանանց տօնը, մին Յովակիմ և Աննայի և միւսն Ղազարու քոյրերուն՝ Մարիամու և Մարթայի հետ, ըստ հին տօնացոյցի, բայց այժմ երկրորդ տօնը զանց առնուած է։

Հոգեկիր Հայրեր՝ Իւղաբեր կանանց հանդէպ Յիսուսի ունեցած պաշտումի ու նուիրման համար ճոխացուցած են եկեղեցւոյ մէջ երգը ու իրենց հոգւոյն քաղցր արտայայտութիւնը։ Նախնի դարուն քրիստոնէական բարեպաշտութիւնը արդեօք յիշատակարանով մը չէ՞ պանծացուցած այն տեղը ուր պատահեցաւ Յիսուս յետ յարութեան և ողջունեց զանոնք ըսելով «ողջ էք. եւ նոքա մատուցեալ կալան զոտս նորա, և երկիրպագին նմա»։ Պատմութիւնը կը լռէ այս մասին, բայց աւանդութիւնը կը խօսի, և ցոյց կու տայ Սիոնի ճանապարհին վրայ Դաւթի բերդին դիմաց, Հայոց Ս. Յակոբի վանքին խիստ մօտ սրբավայր մը՝ ուր հաւատացեալք և ուխտաւորք դարերով գունդագունդ դիմած են ու յիշատակած են նոյն խնկաբեր կանանց աստուածահաճոյ գործը։ Ինչ որ ունին Ս. Երկրի մեծագոյն սրբավայրերը պատմական տեսակէտով, նոյնը կը պակսի Իւղաբեր կանանց տեղւոյն համար, քայց աւանդութեան մատնացոյց ըրած յիշատակարանը իրականութիւն մը եղած է դարերու ընթացքին մէջ, և որքան որ նոյն սրբավայրը ժամանակի բերումով շատ կանուխէն ձեւափոխութիւն ունեցած է և դադրած է ծառայելէ իր նպատակին,